

Հաստատում եմ՝

ՀՀ հեծանվային մարզաձևի

Փետրոսցիայի կախազահ՝

Վեզրոսցիայի Մահակյան

« 19 » հունիս 2019թ.



## Կանոնադրություն

### 2019 թվականի Համահայկական 7-րդ խաղերի

#### 1. Մրցումների նպատակը և խնդիրները

- 1.1 Հեծանվասպորտի զարգացումն ու մասսայականացումը.
- 1.2 Հասարակության շրջանում հեծանվասպորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացումը.
- 1.3 Հայկական հեծանվասպորտի միջազգայնացումը.
- 1.4 Հեռանկարային մարզիկների հայտնաբերումը և հավաքական թիմի համալրումը:

#### 2. Մրցումների վայրը և ժամկետը

- 2.1 Մրցումներն անցկացվելու են Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում օգոստոսի 6-8-ը:

#### 3. Մրցման մասնակիցները

- 3.1 Խաղերին մասնակցում են քաղաքների հավաքական թիմերը և անհատ մարզիկները:

- 3.2 Ցանկացած երկրի քաղաքացի կարող է մասնակցել խաղերին, եթե նա՝

- հայկական ծագում ունի հոր և մոր կողմից
- հայկական ծագում ունի միայն հոր կողմից
- հայկական ծագում ունի միայն մոր կողմից
- ամուսնությունից հետո վերցրել է հայ ամուսնու ազգանունը

Քաղաքների մարզական պատվիրակությունների ղեկավարները պատասխանատու են վերոթվարկյալ կանոնների կատարման համար:

#### **4. Տարիքային սահմանափակումներ**

4.1 Խաղերին իրավունք ունեն մասնակցել 14 տարին լրացած և բարձր տարիք ունեցող հեծանվասպորտի սիրահարներ:

4.2 Մրցաշարին իրավունք չունեն մասնակցել այն մարզիկները, ովքեր ունեն արհեստավարժի լիցենզիա և գրանցված են համաշխարհային վարկանիշային աղյուսակում: Բացառություն են կազմում այն արհեստավարժ մարզիկները, որոնց տարիքը 25 և ավելի է:

#### **5. Բժշկական ապահովագրություն**

5.1 Խաղերին յուրաքանչյուր մարզիկ մասնակցում է սեփական պատասխանատվության, ռիսկի և վտանգի գիտակցությամբ:

5.2 Խաղերի մասնակիցները պարտավոր են իրենց հետ ունենալ ապահովագրության վկայական խաղերի ողջ ժամանակահատվածի համար:

#### **6. Մասնակցության իրավունքը**

6.1 Խաղերին մասնակցելու իրավունք ստացած քաղաքի պատվիրակության յուրաքանչյուր անդամ ստանում է մասնակցի անձնագիր (badge):

#### **7. Մրցումների ծրագիրը**

7.1 Համահայկական խաղերի ծրագրում ընդգրկված են հեծանվաբեռի հետևյալ մրցաձևերը.

7.1.1 Խմբային մրցաերթ 60 կմ տղամարդիկ, 30 կմ կանայք

7.1.2 Կրիտերիում 30 կմ տղամարդիկ, 15 կմ կանայք:

#### **8. Խաղերի մրցանակակիրների պարգևատրման արարողակարգը**

8.1 Ըստ մրցաձևերի մրցանակակիրների պարգևատրման արարողությունը տեղի է ունենում մրցումների ավարտից անմիջապես հետո: Մրցանակակիրները պարգևատրվում են համապատասխան մեդալներով և դիպլոմներով:

8.2 ՀՀ հեծանվային մարզաձևերի ֆեդերացիայի կողմից պարգևատրվելու է հատկապես՝ ամենատարեց մասնակիցը: